

Հայկազարներ բոլոր յերկրների միացիւն

422

ԴԵՊԻ ՈՒՆԵՎՈՐ ԿՅԱՆՔ

ՂԱՄԱՐՈՒՄ ՄՏԿԻ ԻՐԱՂԱԺՆԻ ՍԳԱՍԱՐԻ-
ՄԱՆ ԹՐՋԱՆԻ ԳՅՈՂԱՐՈՒՄ ԶԱՐԳԱ-
ՇԱՅԻՆ ԿՈՆՏՆԵՍՏՈՒՅԻՆԵՐԻ ԿՈՉՐ

ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԻ ԿՈՆՏՆԵՍՏՈՒՅԻՆԵՐԻՆ

ԿՈՒՍԶՐՈՏ 1984 ՅԵՐԵՎԱՆ

338.44

Դ-39

338.14

7-38

Պրոլետարներ լուր յերկրների, միացե՛ք

Դ Ե Պ Ի ՈՒՆԵՎՈՐ ԿՅԱՆՔ

2856
1006
28385

ՂԱՄԱՐԼՈՒ ՄՏԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ
ՅՐՋԱՆԻ ԳՑՈՒՆԵՐԼՈՒ ՀԱՐՎԱԾՅՈՒՆ
ԿՈՒՏՆՏԵՍՈՒՀԻՆՆԵՐԻ ԿՈՁԸ

ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԻ ԿՈՒՏՆՏԵՍՈՒՀԻՆՆԵՐԻՆ



~~10720~~
422

2 APR 2013

30.486

К зажиточной жизни

Воззвание колхозниц-ударниц с. Гедаклу района
Камарлинской МТС к колхозницам Закавказья.

Պատ. խմբ. Վ. Արանյան, Քարգ. Մ. Ջախյան
Մշակույթ Ա. Տ. Մկրտչյան
Հանձնա. քվեյ 4 մարտի 1934 թ.
Տպել բաշխարկեց 8 մարտի 1934 թ.

Հատ. № 198, ինդ. $\frac{\text{П-93}}{\text{РК}}$ Գումար № 7833 (Բ)

Պատկեր № 74, քաղաք 6.000
Թղթի չափը X. 1/32 1/2 քաղթի քերթ

1 քաղ. քերթ. (1 քաղ. քերթով 30.000 քաղ. հատ)

Հանձնարար արտատ. Պրեմիան, Ալլահվերդյան, 27

Отв. ред. В. Атанасян. Перев. М. Закарян
Корректор А. Т. Мкртчян
Сдано в набор 4 марта 1934 г.
Поднаено к печати 8 марта 1934 г.

Արմպարտիզատ, № 198. Ինդ. $\frac{\text{П-93}}{\text{РК}}$

Типография Партиздата ЦК КП(б)А
Эривань, ул. Аллавердян, 27



Ի. Վ. ՄՏԱԼԻՆ

3723-91



ԼԱՎՐԵՆՏԻ ԲԵՐԻՍ

Թանգագիրն ընկերներ.

Այսոր մենք քննեցինք ընկ. Ստալինի քաղաքական հաշվետվությունը և ընկ. Բերիայի ճառը՝ կոլսակցության XVII համագումարում:

Այսոր մենք մեզ հաշիվ տվինք, թե վերքանով ենք մենք կարողացել կատարել մեր մեծ առաջնորդի այն ղեկավարվածները, վոր նա տվել է մեզ հարվածային կոլտնտեսականների համագումարում:

Մտաբերենք մեր թանգագիրն ուսուցչի այս պատմական խոսքերը.

«Կանայք կոլտնտեսություններում մեծ ուժ են: Այս ուժը ստվերի մեջ պահել՝ նշանակում է հանցագործություն կատարել: Մեր պարտականությունն է կոլտնտեսության մեջ առաջ քաշել կանանց և այս ուժը գործի դնել: Ինչ վերաբերում է կոլտնտեսուհիներին իրենց, ապա նրանք պետք է հիշեն կոլտնտեսության ուժն ու նշանակությունը կանանց համար, պետք է հիշեն, վոր միմիայն կոլտնտեսության մեջ նրանք հնարավորություն ունեն հավասարվելու տղամարդուն: Առանց կոլտնտեսությունների՝ անհավասարություն, կոլտնտեսություններում՝ իրավահավասարություն: Թող հիշեն այս մասին ընկեր կոլտնտեսուհիները և թող նրանք իրենց աչքի լույսի պես պահպանեն կոլտնտեսական կարգերը»:

Մենք, Ղամարլվի ՄՏԿ գործունեության շրջանում գտնվող Գյոգաբլվի կոլտնտեսուհիներս չկարողացանք մեր առաջնորդի այս մեծ խոսքերի կողքով անցնել: Նրա արտասանած ամեն մի խոսքը մեխվում էր մեր ականջի մեջ, նոր ուժ էր առաջացնում մեր մեջ,

նոր խանդավառություն, և մենք անցյալ տարի կուտնտեսության դաշտերը դուրս յեկանք նորանոր ձեռնարկումներով ու նորանոր հաղթանակներով:

Յեվ այս պատճառով մենք այսօր ուղում ենք ձեզ բոլորիդ մանրամասն պատմել ամբողջ ճշմարտությունը և մեր հաղթանակների ամբողջ բանալին:

Մեր կուտնտեսությունը կազմակերպված է 1928 թ.: Նա կազմված է 156 տնտեսությունից: Կուտնտեսության արտադրության մեջ անմիջականորեն աշխատում են 105 տղամարդ, 115 կին: 1933 թ. ցանքի մշակման պլանը կազմված էր 33 հեկտար բամբակից, 122 հեկ. խաղողի այգուց և 23 հեկ. այլ հացահատիկային ու բանջարեղեն կուլտուրաներից:

Սրտանց ասած՝ անցյալ տարի մեզ ամենից ավելի անհանգստացնում էր այն հարցը, թե ինչու կուտնտեսությունը միջանի տարի շարունակ գյուղատնտեսական կամպանիայի ամենայեռուն ժամանակ մշտապես բանվորներ է վարձում դրսից: Մենք վոչ մի կերպ չէինք կարողանում հաշտվել այն բանի հետ, վոր միայն 1932 թ. դրսից վարձված 4300 բանվորի վճարված է յեղել 47.000 ուրբի: Բայց սրա հետ միասին այնուամենայնիվ այգիների փորելու աշխատանքը ամբողջովին չվերջացվեց, պլանները մնացին թերակատարված: Շատ ցավ էր պատճառում մեզ այս բանը և դժվար էր մեզ համար, շատ դժվար: Դուր, կուտնտեսող հիններդ հո գիտեք, վոր մեր չինայած ամեն մի կուպեկը, չտնտեսած ամեն մի աշխատանքը ամեն մի չփորված հեկտարը ինչ ուժգին հարված է հասցնում մեր կուլեկտիվ տնտեսությանը, հարված մեր սեփական գրպանին: Մեզ համար դժվար չէր նկատել, հասկանալ այս բոլորը, վորովհետև մենք հո այնքան ել անգրագետ չենք, ինչպես առաջին տարիներին: Այժմ մեր լիկկայաններում հաճախում են 68 կին, վորոնց մեծ մասն արդեն միջանի տարի շարունակ գրագիտություն են սովորում: Մենք արդեն սովորել ենք ազատ կարդալ, գրել, թվերը գումարել, հանել, բազմապատկել, բաժանել:

Ե՛հ, մեզ համար այնուամենայնիվ դժվար էր ամեն ինչ դուրս բերել, հաշվել կուտնտեսության ֆնասի այս մեծ թվերի բոլոր գաղտնիքները: Հանաք չե՞ հո—մի ուրբի չե, յերկու ուրբի չե, հարյուր չե, այլ ամբողջ 47.000 ուրբի:

Բայց մենք շատ յերկար գլուխ կոտրեցինք այս հարցի վրա: Մտածում էինք, հաշիվներ էինք անում և վերջապես վճռեցինք: Մեր հաշիվն այնքան ել բարդ չէր, վոր մեզ մատչելի չլիներ: Մենք պետք է յեղք գտնեյինք, վոր այլևս դրսից աշխատող ձեռքեր չվարձեյինք: Մենք ուղղակի մտածում էինք, չե՞ վոր կուտնտեսության միմիայն տղամարդիկ վոչ մի կերպ չեն հասցնում մշակելու թե բամբակը, թե խաղողը և թե մյուս կուլտուրաները: 105 աշխատող տղամարդիկ 45 օրում մշակում են 112 հեկտար: Իսկ մեզ հարկավոր էր մշակել 177 հեկտար, վորպեսզի ժամկետին ու լրիվ ապահովենք ցանքի վորակական ու քանակական ցուցանիշները: Մենք բոլորս ել անցած տարիների փորձով խորապես գիտակցեցինք, թե ինչքան քիչ է լինում բերքը, յերբ մենք ցանքի բոլոր սահմանված ժամկետները բաց ենք թողնում, իր ժամանակին չենք կատարում:

Յեվ մենք վերջապես մտածեցինք, թե իսկապես մենք ինչու պետք է այս աշխատանքի ամբողջ ծանրությունը գցենք միմիայն տղամարդկանց վրա (արտադրության մեջ նրանք, ինչպես վերև ասացինք, 105 հոգի էին, իսկ մենք՝ 115 հոգի), յերբ վոր գարնանից սկսած մենք ձեռներս ծալած նստում ենք և սպասում աշնանը, բերքահավաքին: Մի՞թե մենք դեռ այնքան հետամնաց ենք ու անճարակ, վոր նույնիսկ հիմա յել չկարողանանք մշակել տեխնիկական կուլտուրաները: Մի՞թե պապական սովորությամբ այգում միայն տղամարդը պիտի շարունակի աշխատել: Մենք հո զուր տեղը չէինք լսում գյուղատնտեսի գրույցները և տեսնում, թե ինչպես են աշխատում ագրոտեխնիկը, ագրո-

ավագը, խաղողը ետող, ծալրատող, հողը փորող ու ծածկող հմուտ ու փորձված մասնագետները:

Յեվ մենք փորոշեցինք լծվել այդ աշխատանքին: Այսպես, առաջին շրջանում միմիայն ետելու վրա աշխատում էին առաջավոր կոլտնտեսուհիներից 53 հոգի: Մենք աշխատում էինք տղամարդկանց հավասար, նրանց պես որակյա կտրելով 4 լիտր կամ $\frac{1}{11}$ հեկտար: Զնայած 1933 թ. գարունը շատ ուշ սկսվեց, բայց և այնպես ետումը մենք ավարտեցինք նշանակված ժամկետից 12 օր առաջ: Մի հատուկ հանձնաժողով, փորը կազմված էր գյուղատնտեսից, ագրոավագից, ագրոտեխնիկից ու բրդագործից, ստուգեց մեր աշխատանքի փորակը և այս գործում ձեռք բերած մեր լավագույն ցուցանիշների համար 32 հոգի ամենից աչքի ընկնող



Գյուղագրի «Նոր կյանք»
կոլտնտեսության նախագահ
Հրայր Հարությունյան

Խանո Գրիգորյան

կոլտնտեսուհիներ պարզևատրվեցին ու բարձրացվեցին կարմիր տախտակի: 1933 թվին անմիջականորեն արտադրության մեջ աշխատող կանանց աշխուրդի տեսակարար կշիռը կազմում էր 35% (24.781 աշխուրդ կանայք տվել էին 8648 աշխուրդ): Որինակ՝ կոլտնտեսուհի Զարգար Զարգարյանը, փոր 1932 թ. փոչ մի աշխուրդ չունեի և անբանություն էր անում, 1933 թ. ուներ 78 $\frac{1}{2}$ աշխուրդ: Յեղիսաբեթ Մնացականյանը 1932 թ. ուներ 3 աշխուրդ, 1933 թ. տվեց 68 աշխուրդ: Զարեկ Բաբա-

յանը ուներ 8 աշխուրդ, 1933 թ. տվեց 92 $\frac{1}{2}$ աշխուրդ: Մարգարիտ Խալաթյանը, փոր 1932 թ. ուներ 60 աշխուրդ, 1933 թ. տվեց 118 աշխուրդ և ստացավ նարվածայինի կոչում: Սոֆիա Մարգարյանը ուներ 57 աշխուրդ, հասցրեց 105-ի:

Կանանց աշխատանքը թերագնահատելու մի անթույլատրելի հանցավոր ձևն էլ այն էր, փոր 1932 թ. կանանց մեծ մասի աշխուրդներն առանձին չէին հաշվում: Շատ կոլտնտեսուհիների աշխատանքը գրանցվում էր նրանց ընտանիքի տղամարդկանց գրքույկներում: Այս տարի խաղողի այգիների մշակման վրա աշխատող կանայք աշխուրդը հասցրին 142-ի: Որինակ, կոլտնտեսուհի Աշո Պողոսյանը 1933 թ. տվեց 141 $\frac{1}{2}$ աշխուրդ, Զինար Դանիելյանը՝ 127, Հայկանուշ Շահբաղյանը՝ 124, Մարգարիտ Խալաթյանը՝ 118, Յեղիսաբեթ Մկրտչյանը՝ 115, Մաթան Բաբայանը՝ 114 $\frac{1}{2}$, Սրբուհի Հախվերդյանը՝ 112, Մարիամ Ազիզյանը՝ 105 և այլն:

Քաղբաժնում աշխատող մեր ընկերները, վերագառնալով Անդրկովկասյան կուսակցական համագումարից, պատմեցին, թե ինչպես ընկ. Բերիան ասել է, փոր կոլտնտեսուհիները շատ քիչ աշխուրդ են տալիս և փաստեր է բերել Անդրկովկասի միջանի հետամնաց շրջաններից, փորտեղ կոլտնտեսուհին 30 աշխուրդ տվել չի տվել:

Այսօր մենք հիմնվելով ընկ. Բերիայի ցուցումների վրա, կոչ ենք անում. բարձրացնենք կանանց աշխուրդի քիվը, մեր աշխատանքը բանակով յեվ վորակով հավասարեցնենք տղամարդկանց աշխատանքին, կանանց ամբողջովին մասնակից անենք տնտեսական կուլտուրաների մեակման աշխատանքների բոլոր բարդ պրոցեսներին:

Մեր աշխատողներից շատերը թերագնահատում են նաև այգեգործության տնտեսական-քաղաքական հսկայական նշանակությունը: Այս առթիվ ընկեր Բերիան Անդրկովկասյան կուսակցական համագումարում ասել է, թե «խաղողը վերին աստիճանի թանգարժեք կուլտուրա չէ

և նա համապատասխան տեղ պիտի գրավի Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ: Սա Անդրկովկասի կուսակցական կազմակերպության այս տարվա առաջնակարգ խնդիրներից է: Յեվ մենք այս խնդիրը վատ չկատարեցինք: Մենք 1932 թ. մեր կուլտնտեսության մեջ խաղողի բերքատվությունը բարձրացրինք մինչև մեկ հեկտարից 82 ցենտներ, անցյալ 1932 թ. 47 ցենտների դիմաց: Յեվ գլխավորն այն է, վոր մենք մեր կուլտնտեսության մեջ առաջին անգամ ամբողջ 122 հեկտար այգիները ժամկետից առաջ փորեցինք մեր կուլտնտեսության աշխատող ձեռքերով, դրսից բանվորներ չվարձելով: 1933 թ. մենք 600 տոնն պլանի դիմաց պետությունը հանձնեցինք 800



Զարդար Զարարյան

Աշո Պողոսյան

տոնն խաղող, կամ 133⁰/₀: 1933 թ. մենք կրկնապատկեցինք բամբակի բերքատվությունը, և 1932 թ. մեկ հեկտարից ստացվող 3 ցենտների դիմաց բարձրացրինք 6 ցենտների. բայց սրանից մենք զժգոհ ենք մնացել և այժմ պայքարում ենք հեկտարից 8 ցենտներ ստանալու համար: Մեր կուլտնտեսությունը զարձել է շրջանի ամուր, տընաեռապես հզոր կուլտնտեսություններից մեկը: Մեր աշխորը հասել է 21ս. 30կ.: Ընդհանուր յեկամուտը 1933 թ. հասել է 766,330ս.—1932 թ. 339,000ս. դիմաց: Ամենևին չչափազանցեցնելով վստահացնում ենք ձեզ, վոր այս

հարցում մեր մասնակցությունը վճռական դեր է կատարել:

Մենք այժմ համարձակ կերպով կարող ենք ասել մեր առաջնորդ ընկ. Ստալինին, վոր մենք ազնվորեն ընթանում ենք նրա նշած ուղիով— «Յեվ յերկրորդ քայլն ենք արել կուլտնտեսականներին և նախկին չքավորներին, և նախկին միջակներին ել ավելի բարձրացնելու, վորպեսզի բոլոր կուլտնտեսականներին հարուստ դարձնենք»:

Մեր նախկին բատրակուհի, 48 տարեկան ծեր կին Աշո Պողոսյանը մենակ աշխատելով իր տնտեսության մեջ, 1933 թ. աշխորերից ստացել է 5000 ուղւի: Նա ձեռք է բերել նոր տուն, կով, կարի մեքենա:

Մի ուրիշը՝ Զինար Դանիելյանը իր աշխատանքով ձեռք է բերել տուն, կով, թոնրի փոխարեն վառարան է վառում, սենյակը սպիտակացրել է, նրա յերեխաներն ապրում են կուլտուրապես ու մաքուր:

Մենք սկսել ենք արագ քայլերով առաջ գնալ:

Մենք կուլտնտեսությունը մաքրել ենք 9 հոգի կուլակային տարրերից: Այս կուլակները անդադար փոփոխում էին մեր ականջին, ոգտագործում էին մեր թույլ կողմերը և մեր կուլտնտեսուհիների հետամնաց խավերի մեջ քայքայիչ աշխատանք կատարում: Զտվածների փոխարեն մենք մեր շարքերը լրացրել ենք 28 նոր ազնիվ աշխատավոր մենատնտեսներով: Որ-որի վրա ավելանում է վաղվա կուլտնտեսականների թիվը, վորոնք սպասում են դիմումները գրպաններում դրած: Գարնանը մենք կաճենք ու կդառնանք համալսարան կոլեկտիվ տնտեսություն: Մենք արագորեն առաջ ենք գնացել և այս հաղթանակները տարել ենք մեր ֆադրածնի ամենույս կոնկրետ, ոպերաիվ դեկավարույան ճնորհիվ:

Այսոր լսելով ընկ. Ստալինի հաշվետու զեկուցումը և ընկ. Բերիայի ճառը կուսակցության XVII համագումարում, մենք մեզ վրա նոր խնդիրներ ենք վերցնում, նոր կոնկրետ պարտավորություններ 1934 թվի համար:

Ընկ. Ստալինը XVII կուսհամագումարում ասաց, Վոր «կանայք կազմում են մեր յերկրի բնակչության կեսը: Այս հանգամանքը հսկայական նշանակություն ունի, և ահա թե ինչու մենք չենք կարող թույլ տալ, Վոր աշխատավորները այս հսկայական բանակը մնա խավարի ու տգիտության մեջ, ահա թե ինչու մենք պետք է փոշուներ աշխատավոր կանանց աճող ակտիվությունը, նրանց առաջընթացումը ղեկավար պաշտոններին, իբրև մեր կուտակականության անկասկածելի նշան»:

Մենք վորոշեցինք.

1. Մեզ մոտ կազմակերպել սեխնիկան ուսումնասիրող հասուկ խմբակներ, վորպեսզի կոյսեսեսունին տասնամյակի բոլոր բարդ պրոցեսները: Ընդարձակել կանանց աշխատանքը խաղողի ետելու, բացելու և փորելու մեջ և նրանց թիվը անցած տարվա 53-ի փոխարեն հասցնել 100-ի: Անցած տարվա հարվածայիններ ընկ. ընկ. Աչո Պողոսյանին, Չինար Դանիելյանին, Հայկանուշ Շահբազյանին և մյուսներին, ընդամենը 32 հոգու մենք ամրացնում ենք մեզ նոր միացած կին աշխատողներ ընկ. ընկ. Վերգուշ Հակոբյանին, Մարգարիտ Հայրապետյանին, Վարսենիկ Դավթյանին և ուրիշներին խաղողը ետելու, բացելու և փորելու աշխատանքում: Սրա հետ միասին մենք տեխնիկային տիրապետելու հարց ենք դնում նաև բամբակագործության մեջ, նոսրացման, բերքահավաքի «վակուում-տուրման» մեքենան յուրացնելու և մեր աշխատանքն այս գործում խորացնելու ասպարեզում:

2. 1934թ. սալ վոյ պակաս, քան 100 աշխուր: Կուտակությունների արտադրության մեջ ամբողջովին ընդգրկել բոլոր աշխատող կանանց: 1934 թ. վոյ մի անրան կին չենք ունենա:

3. Ավելի համարձակ առաջ քաշել կանանց վորակյալ ղեկավար աշխատանքներ: Մենք մեկական թեկնածու յենք առաջ քաշում բրիգադիրների, տրակտորիստների, հաշվետարների, կուտակությունների նախագահների յենթաշրջանային դասընթացների համար: Մենք վորոշել ենք

այս տարի ինչ ել վոր լինի գարնանն ունենալ մի կին բրիգադիր, իսկ սրա համար մեր գյուղական ուսուցչուհուն կցում ենք մեր հարվածային կուլտուրի Կատար Դարիբյանին, վոր նա մի ամսում սրան կուտորակներ սովորեցնի: Տղամարդկանց հետ ընդհանուր դասընթացներում նրան դժվար է լինում այս աշխարհան յուրացնել: Մենք կցում ենք նրան նաև մեր ագրոտեխնիկին, հողաչափին սև հաշվետարին, վոր սովորեցնեն հող չափելը, ագրոմինիստներ և մի բան ել հաշվետարությունից: Մենք ամեն մի բրիգադում առաջ ենք քաշում մի կին իբրև բրիգադիրի ոգնական արտադրական աշխատանքի գծով: Այս տարի մենք առաջ ենք քաշել 19 կին իբրև ողակների ղեկավարներ անցյալ տարվա 9 հոգու դիմաց: Արտադրական խորհրդակցություններում կանանց թիվը հասցրել ենք 5-ի:

4. Կուտակության XVII համագումարի ցուցումների համաձայն սեյ անասնաբուծության հարցերը նայել մեզ մոտ:

Մենք 1934 թ. մեր հերթական խնդիրն ենք դարձնում կուտակականների վոյ մի սնեստություն չթողնել առանց կովի: Կուտակական 156 տնտեսությունից կով ունեն 40-ը: Բայց սրանով չի սահմանվում մեր խնդիրը: Ընկ. Ստալինը շատ սուր էր պոյ գնում է հորթեր ձեռք բերելու և նրանց աճեցնելու հարցը: Մենք, կուտակականներս հանդիսանում ենք մեր կովերի տերերը, և հորթերի աճեցումը, նրանց խնամքը մեր անմիջական գործն ենք համարում:

5. 1934 թվի համար մենք վորոշել ենք անեցնել 100 հորթ: Հորթեր, բացի դրանից, ավելացնում են մեր կովերի հոսք, բայց այս խնդիրը մենք առանձնապես մարտական ենք համարում նայել այն պահառով, վոր միևնեյ այժմ բամբակագործական յեյ այգեգործական քաղաններում վոյ վոյ լըրոեն հոգ չի քաշել բանող անասունների անման, հորթեր մեծացնելու, յեզներ պահապանելու յեյ ձիեր անեցնելու մասին, հույսներ դնելով անասնաբուծական քաղաններից սանալու վրա: Կուտակությունների XVII համագումարում ընկ. Վորոշիլովը իր յե-

լույթի ժամանակ շատ լավ է մատնանշել, փոր — «հո չի կարելի հույս ունենալ, փոր մենք գյուղատնտեսական բոլոր մանր աշխատանքները կկատարենք տրակտորով կամ մեզ համար թանգարժեք վառելանյութով աշխատող հատուկ քարշողներով: Մա ուսցիոնալ չի, սա անթույլատրելի յե, սա ուղղակի վայրենություն է: Մեզ հարկավոր է յեզ, այո, լավ բանող յեզ, և մանավանդ՝ ձի: Ուստի մենք մտածում ենք այս տարի մեր սեփական հորթերից ու քուռակներից աճեցնել յեզներ ու ձիեր:

6. Ձին վնասակար դեր է խաղում նայել մեր յեղիի պաշտպանության գործում: «Առաջվա նման ձին հսկայական նշանակություն ունի բանակի համար: Ձիերի վերարտադրությունը պահանջվում է խնայողաբար վարվել հզի ձիերի, առանձնապես քուռակների ու մատղաշ ձիերի հետ»: Այսպես է ասել ընկ. Վորոշիլովը կուսակցության XVII համագումարում: Մենք կոլտնտեսուհիներս նույնպես պետք է արթուն լինենք դասակարգային թշնամու հարձակումների դեմ: Այս են թելադրում կապիտալիստական յերկրներով շրջապատված մեր սոցիալիստական Մեծ Միության շահերը:

7. Մենք մտածել ենք նայել այն մասին, փոր յեթե Հայաստանի 3-4 շրջաններում՝ Ղամարլու, Աշտարակ, Սարգս-րաբադ, Վաղաշապատ — յուրաքանչյուր տնտեսություն լուրջ մտածի և նախքան հողերում դեղձի ծառապատվելը զարգացնելու մասին, ապա մենք Հայաստանում կարող ենք պահել կոնսերվի 4 մեծ գործարան: Որինակ, մեր շրջանում կա 69 կոլտնտեսություն, փորոնք ընդգրկում են մոտ 8000 տնտեսություն: Յեթե նրանցից ամեն մեկը տնամերձ հողերում անկի 10 դեղձի ծառ, ապա միայն 1934 թ. տնկված կլինի 80.000 դեղձի ծառ: Իսկ մեր սբանչիի դեղձերը հո հսկայական եքսպորտային նշանակություն ունեն: Դուք պատկերացնում եք, թե ինչքան մեծ լրացուցիչ յեկամություններ կունենան կոլտնտեսականները: Այս պատճառով մենք փորոշել ենք գյուղատնտեսի ցուցումներով 1934 թվին խաղողի այգիների,

դաշտերի ու տնամերձ հողերի ազատ վայրերում տնկել 10-ից մինչև 20 դեղձի ծառ ամեն մի տնտեսության մեջ:

8. Մենք փորոշել ենք այս տարի ձեռք բերելու նոր, մեծ, լուսավոր շենքեր մանկաստանների համար: Լրացուցիչ կերպով գնել 25 մահճակալ և ընդարձակել դրանք: Մսուրների կովերի թիվը հասցնել 5-ի և մսուրները դարձնել որինակելի, փորոնք աշխատեն ամբողջ տարին:

9. Մեզնից շատերին լիկկայանն այլևս չի բավարարում: Մենք կոլտնտեսության առջև հարց ենք դրել բացելու յերեկոյան կոլտնտեսական դպրոց: Մենք յերկու կնոջ թեկածություն ենք առաջարկում կոլտնտեսական մշտական դպրոցի համար:

10. Մենք մեր առջև խնդիր ենք դնում 1934 թ. կոլտնտեսության մեջ կազմակերպել խրճիթ-ծննդատուն: Մենք խնդրում ենք առբաժնին ոգնել մեզ այս գործում:

11. Մենք փորոշել ենք այս տարի մեզ վրա վերցնել հասարակական սննդի կազմակերպումը կոլտնտեսության մեջ, շարժական խոհանոցների կազմակերպումը՝ բարձրացնելով ճաշի փորակը և ապահովելով նրանց ժամանակին դաշտ հասցնելը:

12. Վերջապես մենք փորոշել ենք պայքարել մեր կենցաղի մեջ յեղած հետամնացության ու պահպանողականության դեմ: Մենք փորոշել ենք ապրել նոր ձևով՝ մաքուր, կուլտուրապես, ճշտապահ: Կոնկրետ մենք փորոշել ենք 1934 թ. յերկու անգամ սպիտակացնել մեր բոլոր բնակելի շենքերին ու գոմերը: Մենք կոլտնտեսության վարչության առջև հարց ենք դրել ընթացիկ տարում կառուցել հասարակական բաղնիք: Մենք փորոշել ենք այս տարի բոլորս մեր բնակարաններում ունենալ արտաքնոցներ: Մենք առաջադրում ենք բրիգադներում ունենալ սանիտարական կետեր, փորոնք հսկեն մաքրությունն ու առողջապահությունը: Մենք փորոշել ենք բոլոր կոլտնտեսուհիների տներում ունենալ մեկական ուղի: Ռազիո ունեն միայն 49 տուն, չու՛ են 107-ը:

13. Գառունը արդեն մտնեցել է: Ցանքին ախապատրաստությունը մենք վերջացնում ենք փետրվարի 25-ին: Մենք առաջադրել ենք տնտեսության յուրաքանչյուր ասպարեզի համար առանձին 3 հարվածային բրիգադ, վորոնք պիտի ստուգեն, թե ինչպես է կատարված գյուղատնտեսական ինվենտարի նորոգումը, կոլտնտեսություններ սերմացվով, կերով ապահովված լինելը, արգոմինիմումը կիրառելը, կուլտուր-կենցաղային հիմնարկներ կազմակերպելը,—և մարտի 1-ին մենք կազմակերպում ենք փորձնական դաժ փուրս գալը: Մենք բոլորս մինչև վերջին մարզը պատրաստվում ենք զիմավորելու գարնանը ամբողջապես պատրաստված՝ սկսած սերմացվից, գործիքներից, քաշող հւժից և այլն:

14. Մենք բոլորս դուրս ենք գրել քաղաքաժնի թերթ «Բոլշեիկյան կոլտնտեսությունը» և նրա հավելված «Ագրոկանոնները»: Մենք պատրաստվում ենք մարտի 8-ին ագրոկանոններից քննություն տալու: Մենք նմանապես դուրս ենք գրել «Հայաստանի աշխատավորուհի» ժուռնալը:

Կնշանակի, մենք կոնկրետ կերպով ձեռնարկել ենք կուսակցության XVII համագումարի դիրեկտիվների կենսագործման, վորի համար կոչ ենք անում նայել ձեզ բոլորիդ:

Կեցցե մեր կոմունիստական կուսակցությունը և նրա մեծ առջնորդ ընկ. Ստալինը:

Գյոգալվի «Նոր կյան» կոլտոգի
կոլտնտեսությունների անունից՝

- | | |
|-----------------------|-----------------------|
| 1. ԶԻՆԱՐ ԳԱՆԻՆԵԼՅԱՆ | 9. ՎԱՐԴՈ ԲԱԲԱՅԱՆ |
| 2. ՄԱՐԱՆ ԲԱԲԱՅԱՆ | 10. ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏԻՅԱՆ |
| 3. ԳԱՐՈՒՇ ՂԱՐԻԲՅԱՆ | 11. ԶԱՐԴԱՐ ԶԱԲԱՐՅԱՆ |
| 4. ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | 12. ԱԶՈ ՊՈՂՈՍՅԱՆ |
| 5. ԶԱԲԵԼ ԲԱԲԱՅԱՆ | 13. ԱՍՏՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ |
| 6. ԱՐՓԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ | 14. ԱՐՓՈՒԶԻ ՀԱԽԱՆԴՅԱՆ |
| 7. ՓԻՐՈՒԶԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ | 15. ԽՈՍՐՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| 8. ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱԶԱՏԻՅԱՆ | |

11 փետրվ. 1934 թ.

Կատանի Ղամարլի ջըջանի Գյոգալու գ.



ՎՐԻՊԱԿՆԵՐ


Եջ	Տող	Տպագրված է	Պետ է լինի
10	5 վ.	1932 թ.	1933 թ.
»	2 ն.	339.000 ո.	512.000 ո.
13	15 վ.	5	35
»	16 ն.	կով ունեն 40-ը:	կով չունեն 40-ը.
»	9 ն.	100 հորթ.	60 հորթ.

<< Ազգային գրադարան



NL0208461

30.486



К зажиточной жизни.
Воззвание колхозниц-ударниц
с. Гедаклу района Камарли
ской МТС к колхозницам З
кавказья

Партиздат ЦК КП(б) А. 193